

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայտարարվում է մրցույթ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի Ռ. Հովհաննիսյանի անվան №1 հիմնական դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպության դասվարի թափուր աշխատատեղի համար /17 դասաժամ/ :

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1 .Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է/Ձև 1/

2. Փաստաթուղթ /դիպլոմ/՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4.Ինքնակենսագրություն/Ձև 4/,

5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/,

6. Մեկ լուսանկար՝ 3 X4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության պաշտոնական հրապարակման օրվանից՝ 2022 թվականի մայիսի 16 -ից մինչև 2022 թվականի մայիսի 27-ը ներառյալ, ժամը 10⁰⁰-ից մինչև 15⁰⁰, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի հունիսի 2-ին, ժամը 14⁰⁰-ին, <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի Ռ. Հովհաննիսյանի անվան №1 հիմնական դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպությունում:

Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Վարդենիկ, Ռ. Հովհաննիսյանի անվան №1 հիմնական դպրոցի շենք, Կ. Շահինյան փողոց, շենք 51:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 077381180 հեռախոսահամարով: